

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

### ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՍԱՀՄԱՆԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ (ԱՎՏՈՄՈՔԻԼԱՅԻՆ) ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Մոսկվա, 2011 թվականի հունիսի 22)

ԵվրԱզԷՍ-ի շրջանակներում Մաքսային միության անդամ պետությունների Կառավարությունները, այսուհետ՝ Կողմեր,

հիմնվելով «Մաքսային միության եւ միասնական տնտեսական տարածքի մասին» 1999 թվականի հոկտեմբերի 6-ի պայմանագրի, «Մաքսային միության հանձնաժողովի մասին» 2007 թվականի հոկտեմբերի 6-ի պայմանագրի, Մաքսային միության հանձնաժողովի 2009 թվականի սեպտեմբերի 25-ի թիվ 94 եւ 2009 թվականի հոկտեմբերի 21-ի թիվ 106 որոշումների վրա,

ղեկավարվելով միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչում ունեցող սկզբունքներով եւ նորմերով,

Մաքսային միության միասնական մաքսային տարածքում ապրանքների եւ ավտոմոբիլային տրանսպորտի տեղաշարժը հեշտացնելու, Մաքսային միության միասնական մաքսային տարածքում միջազգային ավտոմոբիլային փոխադրումների իրականացման նկատմամբ Մաքսային միության արտաքին սահմանին հսկողություն իրականացնելու գործընթացում միասնական մոտեցումների կազմակերպման նպատակներով,

համաձայնեցին հետեւյալի մասին.

#### Հոդված 1

Սույն Համաձայնագրի նպատակներով՝ գործածվում են հետեւյալ տերմինները՝

«տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողություն»՝ հսկողություն միջազգային ավտոմոբիլային փոխադրումներ իրականացնելու նկատմամբ,

«տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողություն իրականացնող մարմիններ»՝ իրավասու մարմիններ, որոնք Կողմ հանդիսացող պետության կողմից լիազորված են Կողմ

հանդիսացող պետության տարածքում տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողություն իրականացնելու համար,

«հսկիչ կետ»՝ Կողմ հանդիսացող պետության օրենսդրության պահանջներին համապատասխան սարքավորված շարժական կամ անշարժ մաքսային կետ (մաքսային հսկողության կետ), ինչպես նաև պետական սահմանային անցակետ, որոնցում իրականացվում է տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողություն,

«փոխադրող»՝ իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որն օգտագործում է տրանսպորտային միջոցը սեփականության իրավունքով կամ այլ օրինական հիմքով,

«տրանսպորտային միջոց»՝

բեռների փոխադրման դեպքում՝ բեռնատար ավտոմեքենա, բեռնատար ավտոմեքենա կցասայլով, ավտոմոբիլային (թամբի) քարշակ, ավտոմոբիլային (թամբի) քարշակ կիսակցասայլով, շասսի,

ուղեւորների փոխադրման դեպքում՝ ավտոբուս, այսինքն՝ ավտոմոբիլային տրանսպորտային միջոց, որը նախատեսված է ուղեւորներ եւ ուղեբեռներ փոխադրելու համար, ունի ավելի քան ինը նստատեղ՝ ներառյալ վարորդի նստատեղը, այդ թվում՝ ուղեբեռ փոխադրելու համար կցասայլ,

«տրանսպորտային միջոցի քաշային եւ եզրաչափային պարամետրերը»՝ բեռով կամ առանց բեռի տրանսպորտային միջոցի զանգվածի, սոնու վրա բեռնվածության եւ եզրաչափերի (ըստ լայնության, բարձրության եւ երկարության) նշանակությունը,

«Մաքսային միության արտաքին սահման»՝ Մաքսային միության միասնական մաքսային տարածքի սահմանները, որոնք բաժանում են Մաքսային միության անդամ պետությունների եւ Մաքսային միության անդամ չհանդիսացող պետությունների տարածքները:

Սույն Համաձայնագրում հատուկ չսահմանված տերմինները գործածվում են Կողմ հանդիսացող պետությունների, այդ թվում՝ Մաքսային միության շրջանակներում կնքված միջազգային պայմանագրերով սահմանված իմաստներով:

## **Հոդված 2**

Սույն Համաձայնագրով սահմանվում են միասնական մոտեցումներ՝ տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմինների կողմից Մաքսային միության արտաքին

սահմանին այն տրանսպորտային միջոցների նկատմամբ տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողություն իրականացնելու համար, որոնք մուտք են գործում Կողմ հանդիսացող յուրաքանչյուր պետության տարածք (դուրս են գալիս, տարանցման կարգով փոխադրվում են այդ տարածքով):

### **Հոդված 3**

Այն տրանսպորտային միջոցները, որոնք Կողմ հանդիսացող մեկ այլ պետության տարածքից շարժվում են Կողմ հանդիսացող պետության տարածք, ենթակա են տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության Մաքսային միության արտաքին սահմանին տեղակայված հսկիչ անցակետերում՝ համաձայն Կողմ հանդիսացող այն պետության օրենսդրության, որի տարածքով շարժվում են նշված տրանսպորտային միջոցները, ինչպես նաև սույն Համաձայնագրի 4-6-րդ հոդվածներին համապատասխան:

Տրանսպորտային միջոցների, տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության նպատակներով անհրաժեշտ փաստաթղթերի ստուգումը եւ ստուգման արդյունքների ձեւակերպումն իրականացվում են Կողմ հանդիսացող այն պետության օրենսդրության համաձայն, որի տարածքը դրանք հատում են Մաքսային միության արտաքին սահմանին, ինչպես նաև սույն Համաձայնագրին համապատասխան:

Տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմինները փոխադարձաբար ընդունում են այն փաստաթղթերը, որոնք ձեւակերպվել են իրենց կողմից տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության արդյունքներով:

### **Հոդված 4**

Կողմ հանդիսացող այն պետության տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմինը, որի պետական սահմանով տրանսպորտային միջոցները մուտք են գործում Մաքսային միության միասնական մաքսային տարածք, բացի նշված պետության օրենսդրությամբ նախատեսված տրանսպորտային հսկողությանն առնչվող գործողությունների, անցակետերում իրականացնում է՝

1) տրանսպորտային միջոցների քաշային եւ եզրաչափային պարամետրերի համապատասխանության ստուգումը այն նույնանման նորմերին, որոնք սահմանվել են Կողմ հանդիսացող այն պետությունների օրենսդրությամբ, որոնց տարածքներով երթեւեկում են

տրանսպորտային միջոցները, ինչպես նաև այն նույնանման տվյալներին, որոնք նշված են մեծ եզրաչափերով եւ (կամ) ծանրաքաշ բեռի փոխադրման, կամ մեծ եզրաչափերով եւ (կամ) ծանրաքաշ տրանսպորտային միջոցի՝ Կողմ հանդիսացող այլ պետությունների տարածքներով տեղաշարժման համար նախատեսված հատուկ թույլտվություններում,

2) Կողմ հանդիսացող այլ պետությունների տարածքներով երթեւեկելու համար նախատեսված՝ փոխադրողի ունեցած այն թույլտվությունների առկայության ստուգումը, որոնցով իրականացվում է երթեւեկությունը, դրանց համապատասխանությունը իրականացվող փոխադրման տեսակին եւ տրանսպորտային միջոցի բնութագրի համապատասխանությունը այդպիսի թույլտվություններով նախատեսված պահանջներին,

3) մեծ եզրաչափերով եւ (կամ) ծանրաքաշ բեռի փոխադրման կամ մեծ եզրաչափերով եւ (կամ) ծանրաքաշ տրանսպորտային միջոցի երթեւեկության համար՝ փոխադրողի ունեցած թույլտվությունների առկայության ստուգումը, ինչպես նաև Կողմ հանդիսացող այլ պետությունների տարածքներով վտանգավոր բեռների փոխադրման համար նախատեսված հատուկ թույլտվությունների առկայության ստուգումը, որոնցով իրականացվում է փոխադրումը կամ երթեւեկությունը,

4) Կողմ հանդիսացող այլ պետությունների տարածքներով, որոնցով իրականացվում է փոխադրումը, երրորդ երկրներ (երրորդ երկրներից) փոխադրման համար փոխադրողի ունեցած թույլտվությունների (հատուկ թույլտվությունների) առկայության ստուգումը,

5) տրանսպորտային (ավտոմոբիլային) մարմինների կողմից՝ փոխադրողին հաշվառման կտրոնի տրամադրումը համաձայնեցված ձեւին համապատասխան, եթե Կողմ հանդիսացող այլ պետությունների օրենսդրության համաձայն՝ փոխադրումը իրականացվում է առանց Կողմ հանդիսացող այլ պետությունների տարածքներով երթեւեկության համար նախատեսված թույլտվության, ինչպես նաև այն դեպքում, երբ փոխադրումը իրականացվում է բազմակողմանի թույլտվություններին համապատասխան:

## **Հոդված 5**

Մաքսային միության արտաքին սահմանով տրանսպորտային միջոցի դուրս գալու ժամանակ տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմինները, բացի սույն Համաձայնագրի 4-րդ հոդվածում նշված գործողություններից, անցակետերում իրականացնում են հետեւյալի ստուգումը՝

1) Կողմ հանդիսացող այն պետությունների ավտոմոբիլային ճանապարհներով երթեւեկելու համար՝ փոխադրողի ունեցած տուրքերի վճարման անդորրագրի առկայությունը, որոնց տարածքներով իրականացվում է երթեւեկությունը, եթե այդպիսի տուրքի վճարումը պարտադիր է Կողմ հանդիսացող պետությունների օրենսդրությանը համապատասխան,

2) Կողմ հանդիսացող պետության տարածքում միջազգային ավտոմոբիլային փոխադրումների իրականացման կարգը խախտելու համար տուգանքի վճարումը հավաստող անդորրագրի առկայությունը փոխադրողի (վարորդի) մոտ կամ փոխադրողի (վարորդի) նկատմամբ համապատասխան վարչական տույժի նշանակման մասին որոշման բողոքարկումը բավարարելու մասին դատական մարմինների որոշման առկայությունը՝ այն դեպքում, երբ Կողմ հանդիսացող պետություններից մեկի տարածքով երթեւեկելու թույլտվության կամ հաշվառման կտրոնում առկա է տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմնի կողմից փոխադրողի (վարորդի) նկատմամբ այդպիսի տուգանքի նշանակման մասին նշում,

3) Կողմ հանդիսացող պետությունների փոխադրողների տրանսպորտային միջոցները միջազգային ավտոմոբիլային փոխադրումների համար օգտագործելու թույլտվության առկայությունը,

4) մյուս Կողմի տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմնից՝ սույն Համաձայնագրի 6-րդ հոդվածում նշված ծանուցումները ստանալու դեպքում՝ փոխադրողի մոտ անհրաժեշտ փաստաթղթերի առկայությունը:

## **Հոդված 6**

Սույն Համաձայնագրի 4-րդ հոդվածով նախատեսված հսկողության գործողություններն իրականացնելու ընթացքում տրանսպորտային միջոցի վերահսկվող պարամետրերի կամ Կողմ հանդիսացող պետությունների օրենսդրությամբ նախատեսված փաստաթղթերի անհամապատասխանությունը հաստատելիս Կողմերից մեկի տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմինը վարորդին տրամադրում է Կողմերի տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմինների միջեւ համաձայնեցված ձեռով ծանուցում, որը պարունակում է տեղեկատվություն՝

բացահայտված անհամապատասխանությունների մասին,

նախքան մյուս Կողմի տարածք ժամանելը՝ պակասող փաստաթղթերի ստացման անհրաժեշտության մասին,

տրանսպորտային միջոցի երթուղին հաշվի առնելով՝ մյուս Կողմի տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմնի մոտակա հսկիչ անցակետի մասին, որում փոխադրողը պետք է ներկայացնի ապացույցներ առ այն, որ վերացվել են տրանսպորտային միջոցի վերահսկվող պարամետրերի անհամապատասխանությունները, եւ (կամ) ծանուցագրի մեջ նշված փաստաթղթերը:

Ծանուցագրի հանձնման վերաբերյալ տեղեկատվությունն ուղղվում է մյուս Կողմի տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմնին եւ ներառվում տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության այն մարմնի տեղեկատվական բազայում, որը բացահայտել է անհամապատասխանությունը:

Եթե սույն հոդվածի համաձայն Կողմերից մեկի տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմնի կողմից փոխադրողին հանձնվել է ծանուցագիր, ապա մյուս Կողմի տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմինն իրավունք ունի անցակետում իրականացնելու սույն ծանուցագրի կատարման ստուգում, եւ հիմքերի առկայության դեպքում, փոխադրողի (վարորդի) նկատմամբ կիրառելու միջոցներ Կողմ հանդիսացող այդ մյուս պետության օրենսդրությանը համապատասխան:

Մաքսային միության տարածքից տրանսպորտային միջոցի բացթողումը չի իրականացվում՝ նախքան փոխադրողի կողմից սույն Համաձայնագրի 4-րդ եւ 5-րդ հոդվածներով նախատեսված փաստաթղթերի ներկայացումը:

Տրանսպորտային միջոցի վերահսկվող պարամետրերի անհամապատասխանությունը, Կողմ հանդիսացող պետությունների օրենսդրությամբ նախատեսված փաստաթղթերի բացակայությունը կամ անհամապատասխանությունը բացահայտելիս Կողմերից մեկի տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմինը, Մաքսային միության արտաքին սահմանով մեկ այլ Կողմ հանդիսացող մյուս պետության տարածքից շարժվող տրանսպորտային միջոցի մեկնելու պահին՝ դրա մասին տեղեկացնում է մյուս Կողմի տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմնին:

## **Հոդված 7**

Կողմերը, փոխադարձության հիմքով, միջոցներ են ձեռնարկում Կողմ հանդիսացող պետությունների օրենսդրության ներդաշնակեցման, Մաքսային միության արտաքին

սահմանին տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողություն իրականացնելու մեթոդների եւ տեխնոլոգիաների համար՝

1) միջազգային ճանապարհային միջանցքի մաս կազմող՝ ընդհանուր օգտագործման ճանապարհներով տեղաշարժվող տրանսպորտային միջոցների քաշային պարամետրերի նկատմամբ սահմանվող պահանջների առնչությամբ,

2) Կողմ հանդիսացող մյուս պետության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով տրանսպորտային միջոցների երթեւեկության համար վճարվող տուրքի ամբողջականության նկատմամբ հսկողություն համակարգի ստեղծման առնչությամբ,

3) երրորդ երկրների փոխադրողների հետ վիճելի իրավիճակների առաջացման դեպքերում, կարգավորման մեխանիզմների մշակման առնչությամբ,

4) Մաքսային միության տարածքով միջազգային ավտոմոբիլային փոխադրումների պայմանների կատարման նկատմամբ սահմանված պահանջները խախտելու դեպքում տրանսպորտային միջոցների վերադարձման (պահման) մեխանիզմներ մշակելու առնչությամբ:

## **Հոդված 8**

Թույլտվությունը (հատուկ թույլտվությունը) անվավեր է համարվում, եթե՝

1) ձեւակերպված են կամ օգտագործվում են Կողմ հանդիսացող այն պետության օրենսդրության խախտմամբ, որի իրավասու մարմինները տրամադրել են նշված թույլտվությունները,

2) տրանսպորտային միջոցի՝ հատուկ թույլտվության մեջ նշված քաշային եւ (կամ) եզրաչափային պարամետրերը չեն համապատասխանում տրանսպորտային միջոցի եզրաչափերի կշռման եւ չափման արդյունքներին,

3) տրանսպորտային միջոցի բնութագրերը չեն համապատասխանում Կողմ հանդիսացող պետությունների տարածքներով երթեւեկելու թույլտվությամբ նախատեսված տրանսպորտային միջոցների բնութագրերին:

Եթե հսկողության գործողությունների իրականացման ընթացքում բացահայտվել է տրանսպորտային միջոցի պարամետրերի (բնութագրերի) անհամապատասխանություն թույլտվության մեջ նշված պարամետրերին (բնութագրերին), ապա Կողմերից մեկի տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմինն իրավունք ունի, օպերատիվ

կարգով, մյուս Կողմի տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմնից պահանջելու հաստատում թույլտվության վավեր լինելու վերաբերյալ:

### **Հոդված 9**

Սույն Համաձայնագրի կիրարկման նպատակներով՝ տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմինները՝

1) առանձին արձանագրություններ են կնքում, մյուս Կողմի տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմիններին իրազեկում են իրենց պետությունների նորմատիվ իրավական ակտերի այն դրույթների մասին, որոնցով կարգավորվում են տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողություն իրականացնելու նկատմամբ սահմանված պահանջները, տեղեկացնում են միմյանց նշված ակտերում ներկայացված ցանկացած փոփոխության մասին, ինչպես նաեւ փոխանակում են սույն Համաձայնագրի կիրարկման համար անհրաժեշտ փաստաթղթերի նմուշները,

2) փոխադարձաբար եւ կանոնավոր կերպով փոխանակում են տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության արդյունքում ստացված տեղեկատվությունը: Տեղեկատվության բովանդակությունը, դրա փոխանակման ձեւը եւ կարգը սահմանվում են Կողմ հանդիսացող պետությունների տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմինների կողմից,

3) կազմակերպում են Կողմ հանդիսացող պետություններից մեկի տարածքով տարանցման կարգով՝ Կողմ հանդիսացող մյուս պետության տարածք փոխադրվող տրանսպորտային միջոցների մասին տվյալների բազայի վարումը, եւ փոխանակում են այդ բազայում ընդգրկված տեղեկատվությունը:

Տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության արդյունքում ստացված տեղեկատվության փոխանակումը իրականացվում է էլեկտրոնային եղանակով:

Կողմ հանդիսացող պետությունների տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմինները կարող են տրամադրել միջազգային բեռնափոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցների մասին այլ տեղեկատվություն, որը ստացվել է տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության արդյունքում:



## **Հոդված 10**

Տրանսպորտային միջոցների եւ տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության արդյունքների ձեւակերպման եւ հաշվառման նպատակներով՝ տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմիններն օգտագործում են տեղեկատվական ռեսուրսներ, որոնք պարունակում են տեղեկություններ տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության իրականացման լրացուցիչ գործողությունների արդյունքների մասին, որոնք իրականացվում են սույն Համաձայնագրի 4-6-րդ հոդվածներին համապատասխան, ինչպես նաեւ ապահովում են այդ տեղեկատվական ռեսուրսների փոխադարձ օգտագործումը:

## **Հոդված 11**

Կողմերը, սահմանված կարգով, տեղեկացնում են օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններին Մաքսային միության արտաքին սահմանին տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության իրականացման կարգի փոփոխությունների մասին՝ սույն Համաձայնագրին համապատասխան:

## **Հոդված 12**

Սույն Համաձայնագրի դրույթների կատարման համար Կողմերը ստեղծում են համատեղ հանձնաժողով, որի նիստերը կանցկացվեն ըստ անհրաժեշտության:

## **Հոդված 13**

Կողմերի միջեւ սույն Համաձայնագրի մեկնաբանման եւ (կամ) կիրառման հետ կապված վեճերը կարգավորվում են բանակցությունների եւ խորհրդակցությունների միջոցով:

Եթե Կողմերը խորհրդակցությունների ու բանակցությունների միջոցով չեն կարգավորում վեճը Կողմերից մեկի կողմից մյուս Կողմին ուղղված պաշտոնական գրավոր խնդրանք ներկայացնելու ամսաթվից հետո 6 ամսվա ընթացքում, ապա Կողմերից յուրաքանչյուրն այդ վեճը կարող է փոխանցել Եվրասիական տնտեսական համայնքի դատարանի քննությանը:

#### **Հոդված 14**

Սույն Համաձայնագրով չեն շոշափվում Կողմերից որեւէ մեկի՝ այն միջազգային պայմանագրերից բխող իրավունքներն ու պարտավորությունները, որոնց իրենց պետությունները մասնակից են հանդիսանում:

#### **Հոդված 15**

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ եւ լրացումներ, որոնք ձեւակերպվում են արձանագրություններով եւ կազմում են դրա անբաժանելի մասը:

#### **Հոդված 16**

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում անորոշ ժամանակահատվածով՝ այն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը Կողմերի կողմից կատարելու մասին ավանդապահի կողմից վերջին գրավոր ծանուցումը ստանալու ամսաթվից:

Կողմերից յուրաքանչյուրը կարող է դադարեցնել սույն Համաձայնագրի գործողությունը՝ դիվանագիտական ուղիներով դրա մասին գրավոր ծանուցում ուղարկելով ավանդապահին՝ ոչ ուշ, քան դրա գործողության դադարեցման ենթադրվող ամսաթվից 60 (վաթսուն) օր առաջ:

Կատարված է Մոսկվա քաղաքում, 2011 թվականի հունիսի 22-ին, մեկ բնօրինակից՝ ռուսերենով:

Սույն Համաձայնագրի բնօրինակը պահվում է Մաքսային միության հանձնաժողովում, որը դրա ավանդապահն է եւ յուրաքանչյուր Կողմի կտրամադրի դրա հաստատված պատճենը:

(ստորագրություններ)